

Թիւ 26817
Մարտ 27, 1979

Արժանաշնորհ

Տ. Արսէն Քհնյ. Պարսամեան
Հովհան Ս. Ցակոր Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Ռիչմընտ.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք Մարտ 20, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք
թէ ձեր նախազահութեամբ Մարտ 18ին գումարուած համայնքիդ երկրորդ ծխական
ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը ինդրէք ընտրուած անձերու
վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորնըտիր անդամները,
ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւա-
նի անդամոց անունները, հասցէնները եւ հեռամայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշ-
տօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան տարի մը, ի պայծառու-
թիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հազեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժո-
ղովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Զարլգ Տէսէեան
Տէրի Շարիկեան
Ալիս Տարհանեան
Ռաքի Գրիգորեան
Լինտա Շարիկեան